# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*21.05.2024թ.*

## ՈՐՈՇՈՒՄ 624-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԻՑ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 1477-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2017 թվականի ապրիլի 28-ի N-23-Ա և N-24-Ա որոշումներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի բնակիչ Անդրանիկ Պետրոսյանի (մտից 2241) դիմումը.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե՝

1. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքամերձ արոտավայրից (կադաստրային ծածկագիր՝ 09-003-0337-0001-ից) 0,328 հա մակերեսով, 3 (երեք) տարի ժամկետով օգտագործման իրավունքով տրամադրել Գորիս քաղաքի բնակիչ Անդրանիկ Պետրոսյանին՝ տարեկան վարձավճար սահմանելով 3000 (երեք հազար) ՀՀ դրամ:

2. Համաձայն գործող կարգի Անդրանիկ Պետրոսյանի հետ կնքել արոտավայրից օգտվելու պայմանագիր:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

2024/21/05
Ք.Գորիս